

ՍԵՐՈՒՆԴ

«Ցանկացած ելեւնական, տնտեսական քաղաքականութիւն դատապարտուած է ծախողման, երբ երկիրը ծերանում է»:
Միշէ Տեպրտ

Իւրաքանչիւր երկրի, քաղաքի, գիւղի իրական հմայքը նրա շինութիւնները չեն, այլ՝ բնակիչները, որոնց աճն ու բազմացումը ցանկալի լինելով դառնում է նպատակ՝ հաշուի առնելով տարբեր հիւանդութիւնների, արկածների պատճառով կորուստները: Բնակիչների շրջանում է, որ ծնունդ ու զարգանում են զանազան ուղղութեան գաղափարախօսութիւններ ու մտաւոր հոսանքներ: Աւելի քան հարիւր տարի առաջ էր, երբ սկիզբ առին քաղաքական ծախակողմեան գաղափարի թեքումով խմբակներ, որոնք իրենց բնոյթով թէ համոզմունքով տարբեր ու հակադրուած գործիչներ էին, այլ ընկալում ունէին առօրեայ իրականութեան մեծ կամ փոքր իրադարձութիւնների նկատմամբ: Այլախոհութիւն չէր նպատակը, այլ երեւոյթներին տարբեր գնահատական ու կշիռ տալ եւ զանազան համոզումների հիմունքով՝ փոխել սեփական ապրելակերպը, մտայնութիւնը կենցաղը՝ ներշնչուած ազատ խօսքի իրաւունքի առկայութեամբ:

Բազում եւ բազմազան էին նորաստեղծ խմբերը «մտահոգուելով», ձգտելով հիւլէական ռուճերի ու կայանների արգելմանը, բնապահպանութեան հարցերի վերանայումին, նոյնիսկ կոկորդիլոսներին բարենպաստ պայման ստեղծելու անհրաժեշտութեամբ: Նրանք յայտնի են WOKE (առաջադէմ արթնացում) անուն տակ, որոնցից է նաեւ «No kids» (ոչ երեխայ) հոսանքը, որոնք քարոզին հետեւողների հիմնական ցանկութիւնը, թելադրանքն ու պահանջն է՝ կանանց համոզել, որ մերժեն ծննդաբերումը, զուսակ չունենան. աւելի ազատ ժամանակ տրամադրեն վայելքներին, այսինքն՝ դադարել կին լինելուց: Որքան որ տարօրինակ թուայ քարոզը՝ այն լսուեց, տարածուեց եւ ունեցաւ, ի սփիւռս աշխարհի, մեծաթիւ հետեւորդներ:

Որոշ երկրների ղեկավար-պատասխանատուների համար երեւոյթը մտահոգող էր՝ բնակչութեան աճի զգալի նուազումի պատճառով: Ֆրանսիայում, ուր բարեկեցիկ կենցաղը համեմատաբար ապահով է, չկայ պատերազմ ու համաճարակ, իսկ առողջապահական համակարգը պարկեշտ մակարդակի ու արտագաղթը բացակայ, ծննդաբերութեան անկումը պաշտօնապէս եղել է 150 հազար 2010 եւ 2023-ի միջեւ: Պետութեան տագնապի ազդարարուած կոչերը անդադար յիշեցնում են, որ նշուած անկումը բնակչութեան 0,03% է կազմում եւ պէտք է պայքարել այդ նուաստ երեւոյթի դէմ:

Առակա զի՞նչ ցուցանէ:

Մեր հայրենաբնակ քոյրերն ու դուստրերը եւս, ցաւօք, վարակուել ու տառապում են զուսակ չունենալու այդ ախտով եւ սահմանափակում են ոչ աւելի քան մէկ կամ երկու զուսակով (եւ լինելու դէպքում զայն վիճեցնելու պայմանով) բացառութիւնները անշուշտ յարգելի են: Յայտնի փաստ է, որ երկու զուսակով բնակիչների աճ չի կարող լինել, քանզի երկու զուսակը փոխարինում են ըստ քանակի ծնողներին, իսկ ենթադրել մահացութեան պարագային վստահ թերաճ է լինում: Երեխայ ունենալու գաղափարը ժխտողները երբեւէ դոյզմ հոգս ու կարծիք անգամ չունեն, թէ ինչպէ՞ս եւ ի՞նչ միջոցներով է անհրաժեշտ ապահովել ապագայ սերունդների բարգաւաճումը, քանզի նշուած քայլերը նպատակի հետ համատեղելի չեն, այլ հակասական:

Շատ երկրներ, ծննդաբերութիւնները քաջալերելու նպատակով, տարբեր տեսակի նպաստներ են սահմանել եւ այն յատկացնում նորածններին, որ ուղղուած են քաջալերել մայրացած կանանց, զուսակի հետ կապուած ծախսերին: Մխալ չէր լինի, եթէ դպրոցական դասընթացներին, յղիութեան վիճումի դիպուածը, մատուցուէր պարտաւորութիւններին, գերագոյն յանցագործութիւն լինելու իմաստով՝ հիմք ունենալով անժխտելի մի հանգամանք, որ սաղմը արդէն կենդանի էակ է եւ անձեռնմխելի, իսկ արարքը՝ ոճիր:

Աներկբայ է, որ մեր երկրի ազգագրական (ethnographie) խնդիրները աւելի բարդ են, սուր են խճճուած, մինչեւ իսկ ծայրայեղ անհանգստացնող ու դժուարալուծելի, ուր կանանց վերոնշեալ խնդրի հետ ունենք ստիպողական պատերազմի գոհերը եւ սարսափելի արտագաղթը, որ վերջ-դադար չունի. բնակչութեան նուազումը մինչեւ 30% հասցնելով, որ աննախադէպ կսկծալի փաստ է:

Անհերքելի է, որ մտայնութեան մեծ յեղափոխութեան կարիք ու պահանջ կայ բնակչութեան որոշ խւերում եւ այն չի բռնկուի ինքնուրոյն: Պետութիւնը հսկայական անելիքներ ունի այդ ասպարէզում, մինչեւ իսկ տուն դարձի քայլեր ձեռնարկելով, որ բազում խնդիրների հետ է կապուած՝ տնտեսական, թէ բարոյական: Մէկ բան ստոյգ է, որ այդ խնդիրը մի անկիւն նետելիք չէ, այլ յատուկ ուշադրութեան արժանի, բարձր մակարդակի ակնկալիքով լուծումներ յայտնաբերելու:

Առեղծուածային մի հարց է ծագում, թէ հազարամեակ ապրելով օսմանցիների, պարսիկների, ռուսների լուծի ներքոյ հայերը մնացին կառչած իրենց հողին ու ընտանի պարագաներին՝ առանց գաղթելու մտադրութեանը՝ գերի դառնալու, բացի հատուկեմտ դէպքերից, որոնք կապուած էին առեւտուրի գործունեութեան, իսկ եղեռնի հետ կապուած ջարդն ու աքսորը որեւէ աղերս չունեն մեր կամքի ու ցանկութիւնների հետ, որին հարկ չկայ անդրադառնալու. այն յայտնի է ամենքին եւ որեւէ կապ չունեն երկիր լքելու հետ, այլ փախուստ էր կեանք փրկելու բնագրով:

Արտագաղթի չարիքը հսկայական չափերի հասաւ, երբ ի վերջոյ ունեցանք ազատ եւ անկախ պետութիւն, երկիրը վերակառուցելու հնարաւորութիւն ու պահանջ, որ սերտ կապուած էին անխուսափելի դժուարալոյծ խնդիրներին, եւ երկնային առիթը մեզ էր տրուած, որ ի վերջոյ համայն հայութիւնը համախմբուած, թեւերը ջշտելով գործի անցնի, բայց աւա՛ղ, փոխարէնը երկրում ծնունդ առան, զարգացան ու բազմացան բազմաթիւ, բազմաբեւեռ հին ու նոր կուսակցութիւններ, որոնց ոչ կարիքն ունէինք եւ ոչ պահանջը, քանզի փաստերը յայտնի են, որ եղեռնից առաջ եւ յետոյ հայ քաղաքական գործիչները ոչ մէկ դրական արդիւնքի են հասել բազում ատեաններում, ուր հայկական հարց էին քննարկում եւ այդ շարունակում է մինչ օրս:

Մտադիր չեն որեւէ յանցարար ու մեղադրեալ փնտռել, միայն կ'ուզեն հասկանալ, թէ երբ պիտի դադարենք միմեանց միս ուտել եւ կոկորդ կրծել:

Այդ չէր հայի երազանքը:

ՌՈՒԲԵՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆԵՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ (37)

- Ոճաբանութեան ծիրէն ներս տեսանք՝
- Աւելորդաբանութիւններ
- Կրկնաբանութիւններ
- 1. Բառային կրկնութիւններ
- 2. Հնչիւնական կրկնութիւններ
- 3. Կրկնութիւնները եւ հայ մատենագիրները

Ասոնք կարելի է կոչել «ախտագին կրկնութիւններ», այսինքն՝ այնպիսիները, որոնք կ'որակագրվեն, կ'արժեզրկվեն, կը նսեմացնեն մեր խօսքը:

Ստորեւ պիտի տեսնենք կրկնութեան այն տեսակը՝ «**Գեղարուեստական կրկնութիւն**»-ը, որ կամաւոր ու գիտակցաբար փնտռուած է խօսողին կամ գրողին կողմէ եւ ուրոյն բարեհնչութիւն, վայելչութիւն ու գրաւչութիւն կը շնորհի խօսքին:

* * *

4. Գեղարուեստական կրկնութիւն

Կը կոչուի նաեւ **կրկնաբերութիւն**: Կրկնաբանութեան այս տեսակը ոչ միայն չէ մերժուած ոճաբանութեան մէջ, այլ, ընդ հակառակն, հմտութեամբ ու ճարտարութեամբ կիրարկուելու պարագային՝ մեծապէս գնահատուած է ընկալողին կողմէ: Գեղարուեստական կրկնութիւնը կը ծառայէ աւելի ազդու, համոզիչ, յուզական ու տպաւորիչ դարձնելու խօսքը, այս պատճառով ալ ան կը մտնէ վերամբարձ խօսքի բոլոր տեսակներուն մէջ:

Գեղարուեստական կրկնութեան ամենէն աւելի տարածուած ու ծանօթ տեսակը **յանգերգը** է, որ ոտանաւորի մը իւրաքանչիւր տունի աւարտին կրկնուող մէկ տողն է, երբեմն երկու տող, մերթ բոլորովին անփոփոխ, մերթ թեթեւօրէն փոխուած. ասոր տիպարն է Մ. Պեշիկթաշլեանի «Մահ քաջորդոյն»-ին մէջ կիրարկուածը.

**Թըբաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Ձեթուն:**

Յիշեալ բանաստեղծութեան բոլոր եօթը տուներուն կը հետեւի այս յանգերգը, որուն երկրորդ տողը բառացի կը կրկնուի, իսկ առաջին տողը մասնակի փոփոխութիւններով: Այս կրկնութեամբ բանաստեղծը հայ մայրերուն եւ ընթերցողներուն կը միտի փոխանցել զոհուած պատանիին յետմահու պատգամը, որ է՝ հայրենիքի ազատութեան համար յանձն առնուած նահատակութիւնը պէտք չէ սուգի առիթ տայ, այլ միայն ուրախութեան:

Շաւալուն յանգերգի եզակի օրինակ մը կը հանդիսանայ Ղ. Աղայեանի «Յիշողութիւն»-ը, որուն հինգ տուներուն երեքին վերջին երեք տողերը բառացի կը կրկնուին.

**Տօնածախը բոյն էր շինում,
Եւ շինում էր, եւ երգում,
Ամէն մէկ շիւղ կպցնելիս
Առաջուան բոյնն էր յիշում:**

Ուրեմն թաւազրուած եռատողը կրկնուած է երեք անգամ, որով յանգերգը կը կազմէ ամբողջ քերթուածի քսան տողերուն իննը: Աղայեան այնքան ճարտարութեամբ շարադրած է իր քերթուածը, որ այս կրկնութիւնները ոչ մէկ տաղտուկ կը պատճառեն ընթերցողին եւ ունկնդիրին, այլ ընդհակառակն՝ խորապէս հրապուրիչ մեղեդիի մը քաղցրութեամբ կը շոյեն անոնց ներաշխարհը:

Նման յանգերգերով օժտուած են մեր շարականներն շատերը, եւ նպատակը միշտ նոյնն է՝ յատուկ գաղափարի մը կամ պատգամի մը տպաւորումը հաւատացեալներուն հոգիին մէջ:

Կրկնութիւնը յաճախ տեղի կ'ունենայ իւրաքանչիւր կամ բազմաթիւ տողերու վերջը՝ շարահիւսական ամբողջ հատուածի մը ծաւալով. «**Նոյնավերջ**» կոչուած տողերն են ասոնք. օրինակ՝

ՍՓԻՒՌԸ ՔԱՆԻ՝ ՕՐԱԹԵՐԹ ՈՒՆԻ

(Շարունակուած էջ 1-էն)

Քանի սահեցան տասնամեակները, հայախօսութեան նահանջին ու հայերէն ընթերցումի չքացումին զուգահեռ՝ թուլցան ու տկարանալ սկսան նաեւ մեր օրաթերթերը: Նախ բաժանորդներու թիւը հետզհետէ պակսեցաւ: Յետոյ ինք շրջաններու որակաւոր աշխատակիցները մի առ մի հեռացան այս աշխարհէն, ինչ որ ստիպողաբար մղեց թերթերը իրենց սիւնակները լցնելու արտատպումներով (ոչ անպայման ճաշակաւոր ու պիտանի միւթերու ընտրութեամբ...): Մեր շուրջ չնմացնի նաեւ հմուտ ու հայկաբան խմբագիրներ ալ, հետեւաբար տուժեց թերթին բովանդակութիւնը: Լեզուն կորսնցուց իր փայլքը, սխալագրութիւնները լա՛յն չափերով ողողեցին թերթերուն էջերը...: Այսօր, շատ անխիղճ ու ործենէզ արեւմտահայերէն մըն է, որ կը տիրապետէ սփիւռքեան մեր մամուլին վրայ:

Միւս կողմէ՝ տնտեսական նեղութիւնները եւս սկսան սպառնալ հայ թերթերու գոյութեան: Առեւտրական ու ազգային բնոյթի ծանուցումները նուազեցան: Այս բոլորին որպէս հետեւանք, բնականաբար, մեր օրաթերթերէն շատեր կամ շաբաթաթերթի վերածուեցան ակամայ, կամ ալ վերջնականապէս փակեցին իրենց խմբագրատուներուն դռները...:

Ուշագրաւ օրինակ մը տուած ըլլալու համար ըսենք, որ 2002-2012-ի տասնամեակի ընթացքին Փարիզի ստուարաթիւ հայութեան առն հայեացքին առջեւ իրերայաջորդ կերպով դադարեցան տեղական երեք հայերէն թերթեր՝ 17-ամյա «Կամը» օրաթերթը, 84-ամեայ «Յառաջ» օրաթերթը եւ 52-ամյա «Աշխարհ» շաբաթաթերթը:

Այսօր, ամբողջ Սփիւռքի տարածքին լոյս կը տեսնեն լոկ 4 հայաստառ օրաթերթեր, դասական տպագիր ձեւով (թուրքի վրայ): Կան քանի մը նախկին օրաթերթեր, որոնք կամ կրճա-

«Ամեն վայրկեան սիրով տրտում ասում են ես մնաս բարով, «Բորբ արեւին իմ բոց սրտուն ասում են ես մնաս բարով...» (ԿՏ):

Բանաստեղծութեան տասնչորս տողերու տասն կը կրեն այս նոյնավերջութիւնը: Մօտալուս մահուան դաժան իրակա-նութիւնը զգացող երիտասարդ Տերեանը մէկ առ մէկ կը յիշէ այն բոլորը՝ բորբ արեւը, ընկերները, բայց նաեւ ոսոխները, մով երկինքն ու կանաչ ծովը, ոսկեշղթայ յուշերն ու փուշերը, բացուելիք ծաղիկներն ու մամուկները եւ այլն, որոնք կապած են զինք այս աշխարհին եւ որոնցմէ պիտի զրկուի վերջնա-կանապէս: Կրկնութեան միջոցով ալ կը շեշտուի այդ բոլորին համդէպ իր սիրոյ խորութիւնը, ինչպէս նաեւ իր գրկամբքին ու կորուստին մեծութիւնը: Չենք կրնար, միւս կողմէ, անտեսել այս կրկնութեանց յառաջացուած երաժշտականութիւնը, որ կը յածի թերթուածին բոլոր տողերուն վերեւ:

Կրկնութիւնը կրնայ տեղի ունենալ «**Նոյնասկզբ**» տողերով եւս, ինչպէս կը գտնենք «Գողթան երգեր»-ու մէկ մնուշին մէջ. **Երկնը** երկին, **Երկնը** երկիր, **Երկնը** եւ ծովն ծիրանի...:

Այս տողերը շարադրողը պէտք է զգացած ըլլայ այն խոր երաժշտականութիւնը, որ կրկնութիւնը կը բերէ իր խօսքին եւ թէ որքան տափակ պիտի ըլլար ան՝ առանց կրկնութեան. փորձենք՝ «**Երկնէն երկիր, երկինք եւ ծովն ծիրանի**»: Միւս կողմէ՝ նոյնպէս կրկնութեան շնորհիւ ան յաջողած է շեշտել արարչագործութեան կամ երկունքի դժուարութիւնը, տեսակա-նութիւնն ու ընդհանրականութիւնը:

Այլ տեղ նոյնասկզբութիւնը, որ նաեւ **յարակրկնութիւն** (anaphore) կամ նաեւ **նախաբերութիւն** կը կոչուի, կը ծառայէ աւելի շեշտելու միտքը.

Մէկն ի պապանց պարոնորդի, **Մէկն** ի հարանց մուրող լինի, **Մէկին** հազար ծի ու ջորի, **Մէկին** ո՛չ ուլ, ո՛չ մի մաքի (Ֆրիկ):

Նաեւ՝

Անէօք, հայր, գոհար քարերս դարձուց խեցի, **Անէօք, հայր**, փոխեց կնդրուկս անարգ գուղցի, **Անէօք, հայր**, փոխեց ոսկիս մուր պղնձի, Բայց քանի որ շամփուշ կուռք մը պէտք է ինձի, Ես պղինձով ալ պատրանքներս ձուլեցի (Եղիշէ Դուրեան):

«Յարակրկնութիւնը,- կը գրէ Վալերի Միրզոյեան,- հնարաւորութիւն է տալիս խօսողին աստիճանաբար մեծացնելու խօսքի յուզական լարուածքը, ուժականութիւնն ու թափը, կուտակելու փաստարկները, աւելի ու աւելի գրաւելու ունկնդիրներին, վարակելու որոշակի տրամադրութեամբ» («Ճարտասանութիւն», էջ 293):

Յարակրկնութեան ու վերջակրկնութեան ազդու խճանկար մըն է Շիրազի հետեւեալ հատուածը, ուր կրկնուող այլազան տարրերը իրարու կը միահիւսուին իրենց ներքին հակադրութեամբ՝ կերտելով բառային իսկական համանուագ մը.

Մենք խաղաղ էինք մեր **լեռների** պէս, **Դուք** **հողմերի** պէս խուժեցիք **վայրագ**, **Մենք** ձեր դէմ ելանք մեր **լեռների** պէս, **Դուք** **հողմերի** պէս ոռնացիք **վայրագ**, Բայց **մենք** յաւերժ ենք մեր **լեռների** պէս, **Դուք** **հողմերի** պէս կը կորչէք **վայրագ**:



տած են իրենց պարբերականութիւնը, կամ՝ ալ կ'երեւին լոկ համացանցային «օնլայն» դրութեամբ: Թղթային տպագրու-թիւն չունին. կամ եթէ ունին՝ անէնօթայ դրութեամբ չէ: Պատճէշի վրայ մնացող 4 օրաթերթերն են Պէյրութի «Ազակ»-ը, Պոլսոյ «Ժամանակ»-ն ու «Մարմարա»-ն եւ Թեհրանի «Ալիք»-ը: Բարեբախտաբար, այս ցանկին վրայ կրնանք աւելցնել աւելի մեծ թիւ մը երկօրեաներու (օրինակ՝ Փարիզի «Նոր Յառաջ»-ը եւ Պէյրութի «Արարատ»-ը) ու շաբաթաթերթերու, որոնք տարբեր գաղութներու մէջ կը ջանան հայ գիրը ապրեցնել հայ մարդոց շրթներուն վրայ կամ հոգիին խորը, թիավարելով հոսանքն ի վեր...:

Մեր թերթերը, գրեթէ բոլորն ալ, ունին իրենց կայքէջերը ու ձրիաբար կը սպասարկեն հայ ընթերցողին՝ առանց դոյզմ ակնկալութեան: Եւ սակայն... հայորդիներու (մասնաւոր երիտասարդ խաւի) ջախջախիչ տոկոսը չի հետաքրքրուի իր այս կայքէջերով, պահանջք չի զգար հայ բարբառով լուր կամ յօդուած կարդալու: Ախտաճանաչումի կարօտ երեւոյթ է այս:

Կար ժամանակ, երբ նշանաբանի վերածուած էր «Չայ թերթը ընկերն է հայ տան» արտայայտութիւնը: Մեր ետին մնացին այդ երջանիկ օրերը: Այսօր, հայ մարդը, հայ համալսարանականը կամ հայ ուսանողը հայերէն թերթ կարդալ կը խուսափի, որովհետեւ ՅԵԶԱՍՍԻԿ ԿԱՐԴԱԼ ԶԻ ԿՐԱՄԸ, հայերէն ընթերցումի լուրջ դժուարութիւններ ունի: Այո՛, թերեւս հայկական վարժարանէ մը շրջանաւարտ է ան, հայախօս է, սակայն ընթերցումի մշակոյթը չէ ցանուած իր մէջ, կամ գուցէ հրապուրիչ ու շահեկան չի գտներ հայաշ-խարհի լուրերը, կամ... ժամանակ չունի եւ այլն, եւ այլն:

Փա՛ռք Տիրոջ, որ տակաւին կանուան են մեր լրագրերէն շատեր, ոճանք՝ 80, 90, 100 ու մինչեւ իսկ 125 տարեկան: Գուրգուրանք անոնց վրայ:

Դուք ամոնցմէ մէկն ու մէկը կը կարդա՞ք ամէն օր:

L. Շ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՔԱՂՑԿԵՂԻ ԳԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԻՆ ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Քաղցկեղի դեմ պայքարի համաշխարհային օրը կամ պարզապես «Քաղցկեղի համաշխարհային օր»ը որպես տարեկան պաշտոնապես սահմանուեցավ 2000 թուականի Փետրուարի 4-ին, Փարիզի մեջ կայացած «Քաղցկեղի դեմ պայքարի» համաշխարհային համագումարի աւարտին:

Քաղցկեղի դեմ պայքարի համաշխարհային օրը կը նշուի աշխարհի մեջ միջազգային հանրութեան, կառավարութիւններու եւ անհատներու կողմէ: Ամէն տարի, աւելի քան 100 երկրներու մէջ տեղի կ'ունենան մօտ 1000 միջոցառումներ: 150 երկրի մէջ մօտ կէս միլիոն լրատուամիջոցներ եւ ընկերային ցանցեր կը յիշատակեն այս մասին: Առնուազն 60 երկիրներու կառավարութիւնները պաշտօնապէս կը նշեն Քաղցկեղի դեմ պայքարի համաշխարհային օրը:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ «ԿՈՒԿԸԼ»ԻՆ ՀԵՏ

- Որո՞նք են քաղցկեղի յառաջացման 3 հիմնական պատճառները:

Պատասխան – Քաղցկեղի հիմնական երեք պատճառները սովորաբար ունին հետեւեալ բաժանումները.

ա) Ժառանգական գործոններու ազդեցութիւնը: Որոշ ծննդային գործոններ ժառանգական են, իսկ միւսները կրնան զարգանալ ժամանակի ընթացքին շրջապատի միջավայրի ազդեցութեան պատճառով:

բ) Կենսակերպի գործոններ: Որոշ վարքագիծ եւ ապրելակերպի ընտրութիւն եապէս կը մեծցնեն քաղցկեղի յառաջացման վտանգը: Ծխելը, սիգարետ սննդակարգը (օրինակ՝ վերամշակուած մթերքներու կամ կարմիր միսի բարձր պարունակութիւնը), մարզանքի բացակայութիւնը եւ ալքոհոլի չարաշահումը կապուած են քաղցկեղի բարձր հաւանականութեան հետ:

գ) Բնապահպանական եւ աշխատանքային ազդեցութիւն: Աշխատանքի ընթացքին վնասակար միջավայր (կտաւաքար (asbestos), radon, արեւու ուլթրամանրէակազոյն ճառագայթումը, որոշ քիմիական միջոցներ (օրինակ՝ պէնտոն) եւ օդի ապակամութիւն) ազդեցութիւնը կրնայ մեծցնել քաղցկեղի վտանգը: Այս վտանգաւոր գործոններու երկարատեւ ազդեցութիւնը կրնան յանգեցնել բջջային վնասներու, ուստի՝ քաղցկեղի զարգացման հաւանականութեան մեծացման:

օգտագործումը, կը նպաստեն քաղցկեղի յառաջացման բարձր հաւանականութեան: Որոշ քաղցկեղներ խստօրէն կապուած են այս գործոններուն հետ, ինչպիսիք են թոքերու, լեարդի եւ այլն:

3) Աւելի լաւ զննուել եւ յայտնաբերուել - բժշկական արհեստագիտական եւ screening-ի ծրագրերու յառաջընթացը դիրքացուցած է քաղցկեղի կանխահաս յայտնաբերումը, որ կրնայ աւելցնել քաղցկեղի դէպքերու թուային ցուցանիշերը: Կանուխ յայտնաբերումը անպայման չի նշանակեր, որ աւելի շատացած են քաղցկեղի պարագաները, բայց ան կրնայ աւելի տեսանելի դարձնել:

4) Շրջակայ միջավայրի գործոններ – համաշխարհային արդիւնաբերականացումը եւ urbanization (քաղաքայնացում), քիմիական միջոցներու եւ ճառագայթման գործոնները նպաստած են քաղցկեղի վտանգի աւելացման:

5) Իրազեկման եւ պատրաստման բարձրացում - քաղցկեղի մասին տեղեկացուածութեան աճին զուգահեռ աւելի շատ մարդիկ կրնան դիմել բժշկական օգնութեան, որ կը շատցնէ պատրաստման թիւը:


Պէտք է նշել նաեւ, որ չնայած քաղցկեղի դէպքերը աւելցած են, սակայն բուժման, վաղ յայտնաբերման եւ կանխարգիւման ոլորտին մէջ կատարուած յառաջընթացը նպաստած է գոյատեւման մակարդակի բարելւման, այսինքն՝ քաղցկեղով պատրաստուած շատ մարդոց համար այն դարձած է բուժելի հիւանդութիւն:

- Քաղցկեղի ո՞ր տեսակն է աւելի բուժելի եւ որն է ամենաանբուժելի:

Պատասխան - Ամենաբուժելի քաղցկեղները մաշկի, ամորձիներու: Վահանաձեւ գեղձի քաղցկեղին մեծամասնութիւնը խիստ բուժելի է, մասնաւորապէս (papillary thyroid), որ ամենատարածուած ձեւն է:

Նաեւ բուժելի կը նկատուի Շագանակագեղձի քաղցկեղը տղամարդոց մօտ (Prostate), ամենատարածուած քաղցկեղներէն մէկն է: Ենթաստամոքսային գեղձի քաղցկեղը, մասնաւորապէս՝ փոքր բջջային թոքերու քաղցկեղը եւ այլն: Պէտք է նշել, որ բոլորն ալ պայմանաւորուած են կանուխ յայտնաբերման հետ:

Իսկ «անբուժելի» քաղցկեղներէն են ենթաստամոքսային գեղձի քաղցկեղը, թոքերու քաղցկեղը, ուղղի քաղցկեղի խիստ յարձակողական տեսակը, ձուարաններու քաղցկեղը եւ այլն:



- Որո՞նք են կանանց կրծքագեղձի քաղցկեղի յառաջացման գլխաւոր պատճառները: Արդե՞ք կապ մը կա՞յ սեռային կենսաբանական աշխուժութեան կամ կրծքով կերակրման հետ:

Պատասխան - Կանանց մօտ կրծքագեղձի քաղցկեղը կապուած է շարք մը գործոններու հետ, սակայն այն նշանակալի ձեւով ուղղակիօրէն կապուած չէ սեռային կենսաբանական աշխուժութեան կամ կրծքով կերակրման հետ: Գինական ազդակը ժառանգական, հորմոնային, ապրելակերպի եւ շրջակայ միջավայրի գործոններն են:

1. Հորմոնային գործոններ.- Estrogen եւ Progesterone երկարատեւ ազդեցութիւնը կ'ազդէ կրծքագեղձի քաղցկեղի վտանգին վրայ: Ահա թէ ինչու վաղաժամ դաշտանները (մինչեւ 12 տարեկան) եւ ուշ դաշտանադադարը (55 տարեկանէ վերջ) կրնան մեծցնել հնարաւորութիւնը, քանի որ կ'երկարացնեն այն տարիներու քանակը, որոնք մարմինը կ'ենթարկէ այդ հորմոններու ազդեցութեան:

Միւս կողմէ, սակայն, յղութեան եւ կրծքով կերակրումը կրնան նուազեցնել կրծքագեղձի քաղցկեղի վտանգը: Կանայք, որոնք երեխաներ կ'ունենան աւելի երիտասարդ տարիքին, յատկապէս մինչեւ 30 տարեկանը, հակուած են կրծքագեղձի քաղցկեղի աւելի նուազ հնարաւորութեան: Կրծքով կերակրելը քանի մը ամիս կամ աւելի երկար քաղցկեղի նուազեցման գործօնն է:

2. Ժառանգական գործոններ.- BRCA1 եւ BRCA2 ծննդային ժառանգական գործոններով կանայք կրծքագեղձի քաղցկեղի զարգացման զգալիօրէն բարձր վտանգ ունին:

3. Կենսակերպի բնապահպանական գործոններ.- Սննդականոնը եւ մարզական աշխուժութիւնը, գիրութիւնը, յատկապէս դաշտանադադարէն վերջ, կապուած է կրծքագեղձի քաղցկեղի յառաջացման հնարաւորութեան հետ:

Փաստուած է նաեւ, որ ալքոհոլի օգտագործումը նոյնպէս կը մեծցնէ կրծքագեղձի քաղցկեղի վտանգը:

4. Տարիքը.- Կրծքագեղձի քաղցկեղի կարելիութիւնը կը մեծնայ տարիքի հետ: Դէպքերու մեծ մասը կ'ախտորոշուին 50 տարեկանէն բարձր կանանց մօտ:

5. Ընտանեկան պատմութիւն.- Եթէ կինն ունի կրծքագեղձի քաղցկեղով հիւանդ առաջին կարգի ազգական (մայր, քոյր, դուստր), անոր թով հնարաւորութիւնը աւելի բարձր կ'ըլլայ, յատկապէս, եթէ հարազատը պատրաստուած է երիտասարդ տարիքին:

6. Ծառագայթման ազդեցութիւնը.- Կրծքավանդակի մակերեսի ճառագայթային բուժումը հետագային կրծքագեղձի քաղցկեղ կրնար յառաջացնել:

ԿԱՐԳԱՆՕՄՆԵՐ

2000 թուականէն սաղին տեղի ունեցող քարոզարշաւները կ'առաջնորդուին հիմնական կարգախօսերով: Օրինակ, 2025-էն մինչեւ 2027 տարիներու բնաբանն է «United by Unique» (Եզակիով Միացած), կարճ ու կտրուկ մարդոց կը պատգամէ ըլլալ հոգատար եւ գրուցակից:



Այլ տարիներու կարգախօսերն են. - 2022-2024՝ «Փակել խնամքի թերութիւնը», 2019 – 2021՝ «Ես եմ եւ պիտի կարենամ», 2016 – 2018՝ «Մենք կրնանք. ես կրնամ», 2012՝ «Միանաբար բան մը կատարենք», 2010 – 2011՝ «Քաղցկեղը կարելի է կանխել», 2009 – 2010՝ «Ես կը սիրեմ իմ առողջ աշխոյժ մանկութիւնը»:

ՔԱՂՑԿԵՂԻ ԺԱՊԱՒԷՆԻ ԳՈՅՆԵՐԸ



- **Չուսանքի (լաւանտա) ժապաւենը** բոլոր տեսակի քաղցկեղներու իրազեկման ընդհանուր խորհրդանիշն է: Այն կը ծառայէ որպէս միաւորող խորհրդանիշ՝ խթանելով կարեւոր ցանցեր ու աջակցութիւնը քաղցկեղով տառապող իրաքանչիւրին համար:

- **Վարդագոյն ժապաւենը** կը ներկայացնէ կրծքագեղձի քաղցկեղի իրազեկումը եւ կ'ընդգծէ վաղ յայտնաբերման եւ կանոնաւոր զննումներու կարեւորութիւնը:

- **Դեղին ժապաւենը** միզապարկի եւ լեարդի քաղցկեղ ունեցողներունն է: Կը խորհրդանշէ համերաշխութիւնը այդ հիւանդութիւններուն դեմ պայքարող մարդոց հետ, յիշեցնելով որ աջակցութիւնը շատ կարեւոր է քաղցկեղի ճանապարհորդութեան ժամանակ:

- **Կապոյտ ժապաւենները** կը խորհրդանշեն հաստ աղիքի քաղցկեղը, բայց նաեւ կ'ընդգծեն զննումներու եւ կանուխ յայտնաբերման կարեւորութիւնը, ինչպէս նաեւ շարունակական հետազոտութիւններու եւ բժշկական յառաջընթացի անհրաժեշտութիւնը:

- **Նարնջագոյն ժապաւենը** արեան կամ Leukemia-ի եւ երիկամներու քաղցկեղի խորհրդանիշն է եւ կ'ընդգծէ մատչելի բուժման եւ կարեւոր խնամքի կարեւորութիւնը:

- **Շագանակագոյն ժապաւենը** խորհրդանիշն է ձուարաններու եւ արգանդի վզիկի քաղցկեղին: Ան կ'ընդգծէ կանանց առողջութեան բարելւման համար կրթութեան, քաղցկեղի կանխարգիւման եւ քարոզչութեան անհրաժեշտութիւնը:

- **Ոսկէ ժապաւենը** մանուկներու քաղցկեղի իրազեկման խորհրդանիշն է: Այն ուշադրութեան կը հրաւիրէ երիտասարդ հիւանդներու առջեւ ծառայած եզակի մարտահրաւերները եւ կը պաշտպանէ մանկական քաղցկեղի հետազոտութեան եւ բուժման ֆինանսաւորումը:

- **Մոխրագոյն ժապաւենները** կը ներկայացնեն ուղեղի քաղցկեղի իրազեկումը, լոյս սփռելով ուռուցքներու բարդ բնոյթի եւ հիւանդներու համար հետազոտութեան, աջակցութեան եւ նորարարական բուժման կարեւորութեան վրայ:

- **Կանաչ ժապաւենները** կը կեդրոնանան գործարաններու եւ հիւանդներու նուիրատուութեան վրայ: Յարգելով նուիրատուներն ու ստացողները, անոնք կը խրախուսեն գրոյցները փոխպատուաստման փրկարար ազդեցութեան մասին:

- **Մարգարտայ ժապաւենները** թոքերու քաղցկեղի իրազեկման խորհրդանիշն են: Անոնք ուշադրութեան կը հրաւիրեն մարդոց՝ թոքերու առողջութիւնը պաշտպանելու համար:

- **Մանիշակագոյն ժապաւենները** հոմանիշ են ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի իրազեկման: Անոնք կ'ընդգծեն կանուխ պատրաստման, բուժումներու եւ հիւանդներն ու անոնց ընտանիքներուն համար աջակցութեան անհրաժեշտութիւնը:

- **Սեւ ժապաւենները** կը ներկայացնեն մաշկի քաղցկեղի (melanoma) իրազեկումը, ընդգծելով արեւի պաշտպանութեան, մաշկի կանոնաւոր ստուգումներու եւ մաշկի քաղցկեղի բուժման յառաջընթացի կարեւորութիւնը:

- **Ծեփակաւոր ժապաւենները** թոքերու քաղցկեղի պատճառով կենսաբան հետազոտութիւններու յիշատակման համար է: Այս գոյնը կ'իմաստաւորէ շարունակական հետազոտութիւններու, բուժման յառաջընթացի եւ տուժած ընտանիքներուն աջակցելու կարեւորութիւնը:

ԻՐԱՆԻ ԱԳՆ.

«ԻՐԱՆ ՊԱՏՐԱՍ Ե ԱՋԱԿՑԵԼՈՒ ՇԱՅԱՍԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ»

Իրան պատրաստ է աջակցություն ցուցաբերելու Հայաստանի և Ատրպեյճանի միջև երկխոսության, ճեպագրոյցի ընթացքին ըսած է Իրանի Արտաքին գործերու նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Էսմայիլ Պաղային:



Անոր խօսքով՝ կովկասեան տարածաշրջանի եւ անոր բոլոր հարեւաններուն անվտանգութիւնը շատ կարեւոր է Իրանի, այդ շարքին՝ Ատրպեյճանի եւ Հայաստանի համար:

«Մենք լաւ յարաբերութիւններ ունինք երկու երկիրներուն հետ, կայ դիւանագիտական փոխանակում, որ աշխուժացած է վերջին օրերուն», - ըսած է Պաղային:

Իրանը, ինչպէս ան յայտնած էր աւելի վաղ, պատրաստ է որեւէ օգնութիւն ցուցաբերելու Հարաւային Կովկասի մէջ անվտանգութեան եւ կայունութեան ամրապնդման համար, այդ շարքին՝ աջակցելով երկու երկիրներու միջև երկխոսութեան զարգացման:

ՊՆ ՀԱՐԺԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ «ՀԱՄԱՏԵՂ ԼՈՒԾՈՒՄ-2025» ԲԱԶՄԱԶԳ ԶՕՐԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ

ՀՀ ԱՄՆ երկկողմ փոխգործակցութեան ծիրին մէջ, Պաշտպանութեան նախարարութեան ռազմաբժշկական ապահովման վարչութեան ղաշտային շարժական հիւանդանոցը կը մասնակցի Գերմանիոյ Ռաշնային Հանրապետութեան Հոնեմֆելտ քաղաքին մէջ տեղակայուած ԱՄՆ ռազմակայանին մէջ տեղի ունեցող «Համատեղ լուծում-2025» բազմազգ զօրավարժութեան:



Վարժանքին ներգրաւուած ՀՀ ՊՆ բժշկական անձնակազմն ու ԱՄՆ-ի ազգային զօրախումբի գործընկերները համատեղ ձեւաւորուած խումբերով բարդ պայմաններու մէջ կը կատարեն վիրաւորներու տեսակաւորում, անյետածգելի բժշկական օգնութեան ցուցաբերում, վիրաբուժական միջամտութիւններու իրականացում, ինչպէս նաեւ տարահանման կազմակերպում՝ բժշկական օգնութեան յաջորդ փուլ:

Զօրավարժութեան նպատակներն են բարձրացնել հիւանդանոցի անձնակազմին վարժուածութեան աստիճանը, կատարելագործել իրականին մօտ, բարդ պայմաններու մէջ աշխատանքներու կազմակերպման մասնագիտական հմտութիւնները, ինչպէս նաեւ առաւելագոյն չափով բարելաւել բազմազգ միջավայրի մէջ բժշկական ապահովման փոխգործակցուած կազմակերպման մակարդակը:

Ն.Ս.Ս.Ս. «ԱՐԵԳ» ՊԱՐԱՆՈՒՄԲԻ ՓՈՐՁԵՐ



Ուրախութեամբ կը յայտարարենք, որ արդէն սկսած է Ն.Ս.Ս.Ս. «ԱՐԵԳ» պարախումբի փորձերը եւ անոնք կ'ընթանան ըստ սահմանուած յայտագրի:

Պարախումբին մաս կազմելու կամ յաւելել մանրամասնութեանց համար կը խնդրուի հեռաձայնել 70/265829 փոխին:

Ն.Ս.Ս.Ս.-ի «ԱՐԵԳ» ՊԱՐԱՆՈՒՄԲԻ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ԿՈՉ

Շարունակուած էջ 1-էն

Սաֆիտտիին մարմինը պիտի անփոփոխ իր ծննդավայր Տէյր Քանունի մէջ: Քասսն իր հեռասփռուած ուղերձին մէջ անոր-արարձաւ նաեւ հարաւի վիճակին եւ լիբանանեան զարգացումներուն: Ան դատապարտեց վերջերս Պէյրութի եւ մերձակայ շրջաններուն մէջ տեղի ունեցած մոթորսիքներով ցուցադրութիւնները, Հրգպալլայի հետեւորդներէն պահանջելով զերծ մնալ այլ շրջաններու մէջ նման շարժումներ կազմակերպել կամ ուրախ եւ տխուր առիթներով օղը կրակ բանալ: Ընդհանուր քարտուղարը ողջունեց Կազայի մէջ պաղեստինցի գերիներու ազատ արձակումը եւ զայն համարեց մեծ յաղթանակ մը:

ՋԱՆԱԶԱՆԵԼ ԱՆՄԵՂՆ ՈՒ ՄԵՂԱԲՈՐԸ
Հանրապետութեան նախագահ ժողգէ Սուն ընդգծեց պետականաշինութեան մէջ արդարադատութեան եւ դատական մարմիններու գործունէութեան կարեւորութիւնը: Պետա-



կան շուրայի խորհուրդի նախագահ դատաւոր Ֆատի Էլիսըր եւ խումբ մը դատաւորներ ընդունած ատեն, Աուն Պասապտայի պալատէն դատաւորներուն կոչ ուղղեց ըլլալու արդար եւ գործելու անկախ, խուսափելով բոլոր տարածայնութիւններէ: Աուն խոստացաւ ըլլալ արդարադատութեան եւ դատաւորներուն պահապանը՝ գործադրելու համար բոլոր օրէնքները, որպէսզի «անմեղը արդարութեան զոհը չըլլայ, իսկ յանցագործը անմեղ չդառնայ»:

ԼԱՄԻՆ ԵԱՄԱԼ «ՇՐՋԱՆՑԱԾ» Է ՄԵՍՍԻՆ

«Պարսելունա»-ի պատանի յարձակող Լամին Եամալ պատանական մրցանիչ սահմանած է քաթալոնեան ակումբին համար, Լա Լիկայի 22-րդ հանգրուանի՝ «Ալվալեսի» դէմ մրցումին (1-0):

17-ամեայ ֆուտպոլիստը հանդիպման ընթացքին կատարած է 11 յաջող «տրիպլիկ» (21 փորձէն), այս առումով Լա Լիկայի մէջ մրցանիչ սահմանելով «Պարսելունա»-ի ֆուտպոլիստներու շրջանակէն ներս:



Այսպիսով Եամալը գերազանցած կ'ըլլայ Լեոնել Մեսսիի նուաճումը: 2007-ին 20-ամեայ արժանաբանին «Մայորքա»-ի դէմ մրցումին (1-0) կատարած էր 10 յաջող «տրիպլիկ» (20 փորձէն):

Այս մրցաշրջանին Լամինը, «Պարսա»-ի բոլոր մրցաշարերուն մէջ կատարած 29 մրցումներուն դարձած է 10 կոլի եւ 15 փոխանցումներու հեղինակ:

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

20 Մարտ 2025

ՄԻՋԻՆՔ

ՈՂՄՆԵՂԻ ՍՈՒՐԵ ՅԱՐՈՒՔԻՆ ԵԿԵՂԵՂՈՅ ՏԻԿՆԱՆԳ ՅԱՆՃՆԱԽՈՒՄՐ

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المديرية المسؤولة: اني صرافيان
تصدر عن شركة سايسيس للمطباعة والنشر (ش.م.م.)

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՕՐ

4 Փետրուար 2025: Տարուան 35-րդ օրն է: 2025-ի աւարտին կը մնայ 330 օր:

- Պէպեր-տունը**
2000-էն - Քաղցկեղի դէմ պայքարի միջազգային օր:
1945 – Կայացաւ Եաթրայի համագումարը Ֆրանքլին Ռուզուելթի, Ուինսթըն Չըրչիլի եւ Եուսէֆ Սթալինի հանդիպումով: Հոս ծրագրուեցաւ ֆաշիստական Գերմանիոյ վերջնական պարտութիւնն ու գրաւումը:
1789 – ճորձ Ուաշինկթըն միաձայն քուէարկութեամբ ընտրուեցաւ ԱՄՆ-ի առաջին նախագահ:
2003 – Հարաւսլաւիան պաշտօնապէս փոխեց իր անունը դառնալով Սերպիա եւ Չեռնոկորիա:
1976 – 7,5 - 7,9 ուժգնութեամբ երկրաշարժ մը տեղի ունեցաւ Կուսթենալայի եւ Հոնտուրասի մէջ, իլելով մօտ 23.000 բնակիչի կեանքը, աւերելով 300 գիւղ եւ 58.000 տուն մայրաքաղաքին մէջ:
1949 – Իրանի շահ Մոհամմատ Ռիզա Պաշլուին կը վիրաւորուի ձախակողմեան թուտ կուսակցութեան անդամի մը կողմէ կատարուած մահափորձէն:
1948 – Սիւանը (այժմ Սրի Լանքա) անկախութիւն ձեռք կը բերէ Մեծ Բրիտանիայէն:
1971 – Եգիպտոսի նախագահ Անուար Սադատը կ'ընդունի 30 օրով երկարած Սուէզի ջրանցքի զինադադարը եւ վերաբանալ ջրանցքը, սկսելով զօրքերու մասնակի դուրսբերումը ջրանցքի արեւելեան ափէն:
2004 – Մարք Զաքըրպըրը կը ստեղծէ Ֆէյսպուք ընկերային ցանցը:

Ծնունդներ
1878 - Ջապէլ Սկրտիչի Եսայեան (Յովհաննիսեան), մշակութային գրող, արձակագիր, թարգմանիչ, իրապարակախօս, գրականագէտ: 1934 թուականէն ԽՍՀՄ Գրողներու միութեան անդամ: Դիպլոմատով մագապուրծ ազատած է Հայոց ցեղասպանութենէն: 1933-ին տեղափոխուած է Խորհրդային Հայաստան: Շատ չանցած՝ 1936-ին բանտարկուած Պաքուի բանտը: Որոշ տուեալներով, մահացած է 1943 թուականին:



1968 - Արա Կարապետի Սանճեան, հայ պատմագէտ: Պատմական գիտութիւններու դոկտոր: Լոնտոնէն ստացած է դոկտորի աստիճան: Վարած է Պէյրութի Հայկազեան համալսարանի հայագիտութեան, պատմութեան եւ քաղաքագիտութեան ամպիոնի վարիչի պաշտօնը: 2006-ին անցած է Ս. Նահանգներ, ուր Միչիկըն համալսարանի Տիրպոն քաղաքի մասնաճիւղին մէջ կը դասաւանդէ պատմութիւն, միաժամանակ ստանձնելով համալսարանին մէջ գործող հայագիտական կեդրոնի վարիչի պաշտօնը:
1858 - Քուստաքի ալ-Հիմսի, 19-րդ եւ 20-րդ դարերու սուրիացի մեծ բանաստեղծ, գրականագէտ, գրաքննադատ, արձակագիր եւ թարգմանիչ:



Մահեր
1952 - Յակոբ Մանանդեան, պատմաբան, բանասէր, պատմական գիտութիւններու դոկտոր-փրոֆեսոր, ակադեմիկոս:
1999 - Բաբգէն Սարգիսով, ՀԽՍՀ Գերագոյն խորհուրդի Նախագահ:
2001 - Եանիս Քսենաքիս, յունական ծագումով ֆրանսացի երգահան:
1674 - Ոսկան Երեւանցի (Ոսկան Ջուղայեցի, Ոսկան վարդապետ), արքեպիսկոպոս, տպագրիչ-իրատարակիչ, մշակութային գործիչ, լեզուաբան:



ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՕՐ



- Պէյրութ** (արեւոտ) ցերեկը 18/14 գիշերը՝ 60% տամուկ
- Երեւան** (արեւոտ) ցերեկը 7/-2 գիշերը՝ 43% տամուկ
- Հալեպ** (ընդհ. արեւոտ) ցերեկը 15/9 գիշերը՝ 52% տամուկ
- Պանակոս** (թեթեւ անձրեւ) ցերեկը 15/8 գիշերը՝ 42% տամուկ
- Տուպայ** (արեւոտ) ցերեկը 23/15 գիշերը՝ 49% տամուկ
- Լոս Անճելըս** (մասամբ ամպամած) ցերեկը 17/13 գիշերը՝ 63% տամուկ
- Սիտնի** - վաղը (ընդհ. ամպոտ) ցերեկը 29/22 գիշերը՝ 65% տամուկ
- Մոնթեվիդեո** - (թեթեւ անձրեւ) ցերեկը 27/20 գիշերը՝ 78% տամուկ